



Արմենիա
Ինչորանս

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԵՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ապահովադիր

Ապահովադիր կարող է հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր, հանդիսացող կամ իրավական այլ հիմքով ավտոտրանսպորտային միջոցի տիրապետման, տնօրինման, օգտագործման (շահագործման) իրավունք ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

Փոխհատուցում ստացող անձ

ա) ֆիզիկական անձինք, որոնց կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառվել է վնաս և որոնք ՃՏՊ-ի հետևանքով պատճառված վնասների արդյունքում օրենքով և այլ իրավական ակտերով ունեն փոխհատուցման պահանջի իրավունք,

բ) իրավաբանական անձինք, որոնց գույքին պատճառվել է վնաս և որոնք ՃՏՊ-ի հետևանքով պատճառված վնասների արդյունքում օրենքով և այլ իրավական ակտերով ունեն փոխհատուցման պահանջի իրավունք:

Ապահովագրության օբյեկտ

Ծրագրով կարող է ապահովագրվել միայն տվյալ ավտոտրանսպորտային միջոցի գծով «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ում ԱՊՊԱ պայմանագիր ունեցող թեթև մարդատար ավտոտրանսպորտային միջոցի (որը չի շահագործվում որպես տաքսի, երթուղային տաքսի կամ հանրային տրանսպորտ) սեփականատիրոջ պատասխանատվությունը, որն առաջանում է ապահովագրության պայմանագրում նշված տարածքում ավտոտրանսպորտային միջոցի շահագործման ժամանակ երրորդ անձանց կյանքին, առողջությանը և գույքին պատճառված վնասների արդյունքում:

Ապահովագրական պատահարներ

**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԵՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ**

Ապահովագրական պատահար է համարվում Ապահովադրի կողմից ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ապահովագրության պայմանագրում նշված ավտոտրանսպորտային միջոցի շահագործման հետևանքով տեղի ունեցած ՃՏՊ-ի արդյունքում երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասը, որն << օրենսդրությամբ սահմանված կարգով հիմք է հանդիսանում տուժած անձանց կողմից վնասի փոխհատուցման պահանջի համար և կապված է միայն՝

ա) այլ ավտոտրանսպորտային միջոցների վնասվելու կամ ոչնչանալու հետ,

բ) այլ ավտոտրանսպորտային միջոցներում գտնվող գույքի վնասվելու կամ ոչնչանալու հետ,

գ) այլ շարժական կամ անշարժ գույքի հետ շարժական ավտոտրանսպորտային միջոցի բախվելուց առաջացած վնասի կամ ոչնչանալու,

դ) ֆիզիկական անձանց մահվան կամ աշխատունակության կորստի հետ:

Ապահովագրության տարածք

Հայաստանի Հանրապետություն

Ապահովագրական գումար, ապահովագրավճար

Ապահովագրական գումար	Սակագին	Ժամկետ	Ապահովագրավճար
1 250 000	0,4%	10 օրից՝ 6 ամիս (ներառյալ)	3 000
1 250 000	0,4%	7 ամսից՝ 1 տարի	5 000

Ոչ պայմանական չհատուցվող գումար

Չի կիրառվում

Ապահովագրավճարի վճարման կարգ և ժամկետ

Միանվագ, ապահովագրության պայմանագրի կնքման պահին

Պահանջվող փաստաթղթեր և տեղեկություններ

- Ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիր կամ հաշվառման հայտարարագիր,
- Ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթեր
- Իրավաբանական անձի դեպքում՝ պետ գրանցման վկայականը
- Հեռախոսահամար

Ապահովադրի (վարորդի) գործողությունները պատահար տեղի ունենալու դեպքում՝

**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ**

- Չտեղաշարժել ավտոմեքենան,
- Չլքել, չթողներ, չհեռանալ պատահարի վայրից,
- Չընդունել որևէ պատասխանատվություն,
- Տեղի ունեցած պատահարից հետո անհապաղ՝ ոչ ուշ քան 40 րոպեի ընթացքում, Ապահովագրության պայմանագրում նշված հեռախոսահամարներով տեղեկացնել Ապահովագրողին: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովագիրը կամ վարորդը պատահարի արդյունքում գտնվել է անգիտակից վիճակում: Անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում Ապահովագիրը կամ վարորդը պարտավոր է անհապաղ՝ ոչ ուշ քան 40 րոպեի ընթացքում, Ապահովագրության պայմանագրում նշված հեռախոսահամարներով տեղեկացնել Ապահովագրողին պատահարի մասին:
- Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուն հաջորդող օրվանից հաշվված առավելագույնը 15 աշխատանքային օրվա ընթացքում միանվագ իրականացնում է ապահովագրական հատուցումը: